Կարգապահական գործ թիվ ԿԳ-18025

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի օգոստոսի 11-ի թիվ 210-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/158-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԼԻԹ ՔԱՄԱԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Լիլիթ Քամալյանին (արտոնագիր՝ թիվ 1259) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 23.02.2018թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Լիլիթ Քամալյանն ունի 140.000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. հոկտեմբերից մինչև 2018թ. հունվար (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

27.02.2018թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 79-Ա/ԿԳ-18025 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Լիլիթ Քամալյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի

կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը 05.03.2018թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 11.08.2018թ., ժամը՝ 10:52-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Լիլիթ Քամալյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Լիլիթ Քամալյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 15.10.2011թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Լիլիթ Քամալյանն ունի 140.000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. հոկտեմբերից մինչև 2018թ. հունվար (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 23.02.2018թ. տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Լիլիթ Քամալյանն իր անդամավճարի պարտքը մարել է մասնակի (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 10.08.2018թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն Լիլիթ Քամալյանի (արտոնագիր՝ 1259, ստացված՝ 15.10.2011թ.) նկատմամբ 2013-2018թթ. ընկած ժամանակահատվածում անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական գործը):

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լիլիթ Քամալյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:* Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ*:

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ *Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար*:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 7-րդ կետի՝ *Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը,* իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ *Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանը ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Լիլիթ Քամալյանը խախտել է վերը նշված կանոնների պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից տրամադրված 23.02.2018թ. տեղեկանքով: Ավելին՝ կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ նա շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր:

Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում նաև, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանը առաջին անգամ է ենթարկվում կարգապահական պատասխանատվության և պարտքը մասնակի մարել է:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, Կարգի 21-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Լիլիթ Քամալյանին (արտոնագիր՝ թիվ 1259) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Լիլիթ Քամալյանի (արտոնագիր թիվ 1259) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Լիլիթ Քամալյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյան

11 օգոստոսի 2018թ.
թիվ ԿԳ/158-Ա
ք. Երևան